

---

ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ Գ. ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»  
ՊՈԵՄՈՒՄ

ԱՆՆԱ ԱԲԱՋՅԱՆ

Դարձվածքները, պատկերավոր խոսքի կառուցման կարևոր բաղադրիչ լինելով, ինքնատիպ կիրառական դրսևորում են ստանում ցանկացած գեղարվեստական երկում: Խոսքարվեստի հնարավորությունները անսահմանափակ են. դրա լավագույն վկայումը Գ. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմն է, որի հավերժության գաղտնիքը ոչ միայն բովանդակության մեջ է, այլև հիմնագաղափարների մատուցման բանաստեղծական անկրկնելի արվեստի: Նարեկացին հրաշալի գիտեր իր առաքելության խորհուրդը. «Մատեանը» գրված է ի լուր մարդկության:

Պոեմը հեղինակը բնորոշում է հետևյալ դարձվածքներով.

**արձան յախտեան.**

«Եւ գրեալ դրոշմեցես յարձան յախտեան  
Ընդ հաճոյականացն սպասաւորութիւնս  
Կացցէ՛ առաջի քո մշտնջենաւոր» (էջ 598)<sup>1</sup>:

**կտակ պարտեաց.**

«Եւ քանզի անդառնալի ուշւոյն յիշատակ  
Աստեացս **պարտեաց** զայս **կտակ** թող՝ որոց ընթեռնուն» (էջ 461):  
Նարեկացին «Մատեանը» (այն անվանում է «բան հիւսուած յողաւորական խօսիք») համարում է Տիրոջն ուղղված **բանական նվեր** («նուէր բանի»):

«Եւ արդ, ընկա՛ւ, զայս հիւսուած բանի աղիողորմ հեծեճանաց  
Եւ հոտոտեցիս յայս նուէր բանի անարիւն գոհի, թագաւոր երկնի» (էջ 598):

Նարեկացին իր մեջ կրում էր մարդկային աշխարհի խորհուրդը, որի մեկնությունը պիտի որոնել քրիստոնեական վարդապետության «խորհրդարանում»:

Նարեկյան ողբերգության յուրաքանչյուր տողի ենթատեքստում կարդում ենք սեր, հավատ և լույս: Դարձվածային բազմաթիվ արտա-

---

<sup>1</sup> Բնագրային օրինակները բերվում են ըստ Գ. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Եր., 1980:

հայտություններով հեղինակը ուսանում է քրիստոնեական վարդապետության խորհուրդը, որի ճշգրիտ գիտակցումն է փրկել մարդկային աշխարհը.

- Ձի Քրիստոսեան՝ Ավետարանն կեանսն է ամենեւին (էջ 380):

- Թէ՛ Որ կարդաց զանուն տեանն՝ նա կեցցէ (էջ 289):

- Դարձարուք առ իս, եւ ես դառնամ առ ձեզ

Եւ յորժամ դարձցիս եւ հառաչեցես, յայնժամ կեցցես (էջ 452):

- Ոչ ուրացողացն ձեռուք, այլ դաւանողացն հաւատովք

Աստուածապէս նուիրեալ եւ ի մասունս անհատս բաշխեալ (էջ 456):

Նարեկագիտությունը ըստ արժանվոյն է գնահատել Նարեկացու լեզվամտածողության խորքային ուժը: Դարձվածային յուրաքանչյուր արտահայտություն դրա լավագոյն վկայումն է: Դրանք ունեն ոչ միայն դավանաբանական բովանդակություն, այլև կենսափիլիսոփայական այնպիսի ընդհանրացումներ են, որոնք դուրս են ժամանակային և տարածական որևէ սահմանափակումից: Ներկայացնենք բազմաթիվ օրինակներից մի քանիսը.

- Բարի է ըստ իմաստնոց ումեան երջանկի

- Անկանել ի ձեռս տեանն և մի՛ ի ձեռս մարդկան

Ձի որպէս մեծութիւն նորա՝ եւ ողորմութիւն նորին (էջ 526):

- Ոչ սերմանեցի արդարութիւն, ըստ բանին

Ով սեայ.

Եւ զիս՝ ընդ հնձեցի եւ ժողովեցից զկենաց պտուղն (էջ 584),

քանի որ

- Եւ ըստ տարագու սերմանն եւ հնձելն է իրաւացի (էջ 457):

- Մտեմ ի բոյնն աղանի եւ անդուստ ագռաւ ելանեմ (էջ 529):

- Ո՞վ ոք ընդ մեղացն հեշտութեան

բոց անշեչ հնոցի ոչ խառնեաց (էջ 362):

- Եւ կամ յո՞ ըս թարգմանի առած առակին,

Թէ՛ Միրտ իմաստնոյն՝ ի տանս գոյ,

Եւ սիրտ անմտին՝ ի տան ուրախութեանն (էջ 443):

Դարձվածային արտահայտությունները ընդգրկում են դավանաբանական ասույթներ, առածներ, ասացվածքներ, կենսափիլիսոփայական ընդհանրացումներ, որոնց գերակշռող մասը հեղինակային է: Ճիշտ է Ա. Ղազինյանի դիտարկումը. «Այստեղ ամեն մի տող կարող է հնչել իբրև թեւաւոր ասույթ: Հազուադիւս վարպետութեամբ Նարեկացին ջնջում է դարերի անջրպետը: Նրա քնարական հերոսի ապրումները համահնչուն են այսօրուայ ապրումներին, այժմեականութեանը»<sup>2</sup>:

Հեղինակային խորախորհուրդ ասույթները՝ փոքրածավալ միավորներից սկսած, կարող են ընդգրկել գլուխներ կամ ենթագլուխներ, օ-

<sup>2</sup> Ա. Ղազինեան, Գրիգոր Նարեկացի, Բանաստեղծական արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 143:

րինակ՝ բան Լ-ի Գ ենթագլուխը մարդկային էության երկկողմանի միասնությունն արտահայտող հրաշալի փոխաբերույթ է\*.

Ընպանակք երկու յերկոսին ձեռին,  
Մինն՝ արեամբ, եւ միւսն կաթամբ,  
Երկու բուրանոցք կայծակնաւորք,  
Սկաւառակք կրկին կրաւորական համոց  
Մինն քաղցր, եւ միւսն դառնութեամբ,  
Բաժակք զոյգ առ երկուս բերմունս,  
Մինն է արտաւար, եւ միւսն՝ ծծումբ (էջ 365):

Հակադրությունները շարունակվում են մինչև ենթագլխի ավարտը: Հակադրումը պոեմում գործածված հիմնական ոճական միջոցներից մեկն է, որով հեղինակը ասելիքը դարձնում է տպավորիչ: Նարեկացին լավագույնս տիրապետում է դասական գրաբարին, որի բոլոր հնարավորությունները՝ ուղղված գեղարվեստական խոսքի կառուցմանը, օգտագործում է մեծագույն տաղանդով: Լեզվական դրսևորումները, որոնք քերականական նորմերի և բացառությունների մի անկրկնելի ամբողջություն են, գրաբարի ոճաբանության հարուստ նկարագրի լավագույն նմուշներ են. օրինակ՝ ստորադասական եղանակի բայաձևերի գործածությունը հրամայական եղանակի իմաստով, հակադրությունների կազմությունը դրական և ժխտական խոնարհման բայաձևերի հակադրմամբ, հոետորական հարցում արտահայտող բացականչական նախադասությունների՝ համոզիչ պատասխան պարունակող հարցական երանգով կառույցները, դերբայական նախադասությունների կանոնիկ շարադրանքով կառույցները, բառապաշարի անսպառ աշխարհը, բառապաշար, որը հեղինակային նորակերտ բառերի հարստությամբ բացառիկ է:

Գրաբարի ոճաբանության ամենաեական բաղադրիչը դարձվածային ոճաբանությունն է, որը բաց էջ է քերականագիտության մեջ: Նարեկացու պոեմի դարձվածային միավորների ոճական արժևորումը նորովի է գնահատում դասական գրաբարի լեզվական նկարագիրը, որի համար կարևորվում է գրողի լեզվամտածողության ակունքների գնահատականը, իսկ դարձվածային ոճաբանության ցանկացած դրսևորման հենքը ժողովրդական լեզվամտածողությունն է: Լինելով ժողովրդական լեզվամտածողության կրողը՝ Նարեկացին հրաշալի քերականագետ, շարահյուսագետ և դարձվածաբան է. նրա պոեմում յուրաքանչյուր գլուխ լեզվական ամբողջական կառուցվածքային միավոր է, որի յուրաքանչյուր տողում լեզվական մակարդակների բոլոր միավորները (հնչյուն և հնչույթ, բառաձև և բառույթ, խոսքի մաս, քերականական ձևույթ, շարույթ և դարձույթ) ունեն իրենց օրինաչափ դրսևորումը:

---

\*Փոխաբերույթ եզրը գործածում ենք հեղինակային մեծածավալ ասույթների համար:

Արդի հայերենի դարձվածային միավորների ոճական դրսևորումների վերաբերյալ գիտական հետաքրքիր ուսումնասիրություն է կատարել Խ. Բաղիկյանը: Նրա կարևոր դիտարկումների շարքում ընդգծենք ոճական այն հնարանքը, որ կոչվում է բացթողում (էլիպսիս)<sup>3</sup>: Դարձվածային արտահայտություններում ստորոգյալը կամ նրա բաղադրիչ միավորները հաճախ զեղչվում են. այս իրողությամբ ստեղծվում է հնչերանգային դադար, որի միջոցով ասելիքը դառնում է ավելի ներագրու: Վերոբերյալ Լ գլխի Գ ենթագլուխը սրա լավագույն վկայումն է:

Դարձվածային արտահայտությունները և դարձվածային միավորները կարևոր ոճական արժեք են ստանում նաև նրանով, որ դրանք **ոճական դարձույթների** հրաշալի օրինակներ են և վկայում են Նարեկացու գեղարվեստական պատկերի ստեղծման տաղանդի մասին:

Խ. Բաղիկյանը նշված արժեքավոր աշխատության մեջ մանրակրկիտ ներկայացնում է արդի հայերենի դարձվածքների ոճական արժեքը: Նա անդրադառնում է ոճական իրողությունների, որոնցից են համըմբռնումը, հակադրումը, պատկերի ստեղծման ոճական միջոցների, ինչպիսիք են՝ զեղչումը (էլիպսիս), սաստկացումը, նվազաբերությունը, կրկնությունները, շաղկապների, նախդիրների, դերանունների ու քերականական այլ միավորների կուտակումը տողասկզբում, շրջադասությունը, անեծքների և օրինանքների ինքնատիպ գործառույթը դարձույթ արժևորմամբ և այլն: Գ. Նարեկացու «Մատենան ողբերգութեան» պոեմում տեղ գտած դարձվածային միավորները, որոնք գերազանցապես հեղինակային են, ոճական դարձույթների հրաշակերտ օրինակներ են, որոնց ամբողջական շտեմարանը գրաբարի դարձվածաբանության կարևորագույն մասն է: Ներկայացնենք բազմաթիվ օրինակներից լավագույնները.

ա) **օբսիմոբոն**. իմաստային հակադրումը ստեղծում է հեղինակի հոգեվիճակի տպավորիչ նկարագիրը.

- Բագումս մեռեալ եւ մնաս կենդանի (էջ 456):
- Չարտաքնայարդար բաժակս անմաքուր (էջ 350):
- Չռեալ որմս գարշունակ (էջ 350):
- Անձեռնկալ կապեալ (էջ 345):

բ) **շրջասույթներ**

- տեսութիւն մտաց (էջ 278)՝ միտք իմաստով,
- պատուհան աչացս (էջ 342)՝ աչք իմաստով,
- ստինս աչաց (էջ 251)՝ արցունքոտ աչքեր,
- աչք ի ողբումն (էջ 365)՝ ողբ, կոծ,
- գերանակիր ակնս (էջ 350)՝ մեղսալի իմաստով,
- լիճ լուսոյն (էջ 374)՝ աչք իմաստով,

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս Խ. Բաղիկյան, Դարձվածային ոճաբանություն, Եր., 2000, էջ 36:

- աչք հոգւոյ (էջ 404)՝ հոգեկան աշխարհի իմաստով,
- ակն ոգւոյ (էջ 466),
- ուշ իմաստին (էջ 596)՝ ինելամտություն,
- դրունք իմաստից (էջ 599)՝ իմաստնություն,
- ի սեւան իմաստնութեան (էջ 599)՝ զգայության սեւեր՝ զգայական աշխարհի իմաստով,

- խորհրդակիր սենեակ զգայութեանց (էջ 246)՝ մտավոր աշխարհ,
- ուշ մտաց (ուղիւ մտացով) (էջ 107)՝ միտք, մտածողություն, ևն:

**զ) իմաստային սաստկացում՝ չափազանցություն**

- Աներեւոյթ կրակարան տապոյ բորբոքմամբ մեծաւ անգովանալի, Անտեսական իմն քրայս հալոցաց սաստիկ եռացմամբ անշիջանալի, Անգատելի դեղոց ջերմութիւն ի յերիկամաց մասունս երկակի (էջ 346):

- Չանձինս մեղաց սաստկութեան բոց  
 Չովացուցանել ոչ բաւականացին (էջ 516):

- Ո՞վ ոք ընդ մեղացն հեշտութեան  
 բոց անշէջ հնոցի ոչ խառնեաց (էջ 362):

- Չտարտամութիւն տարակուսանացս  
 իբր ճաշակումն մահու, արբի (էջ 346):

- Ի կորեանց առիծուց անձնական աւժու եղեոնային (էջ 252):

- Կերպս ձուոց քարբից՝ լցեալ ժանտութեամբ (էջ 250) և այլն:

դ) **Հակադրումները** ընկած են պոեմի շարադրանքի հիմքում: Դիտարկենք դարձվածային արտահայտություններ կենդանիների հակադրումով.

- Յորս է տեսանելի ի մէջ արջնատես ագռաւուց՝ սպիտականիշ երամս աղանեաց

Ի մէջ իրոխտականաց ձիուց անմաքրից որոզս հանդարտաբարս

Ի թիւս շնանց գազանականաց գառինս սիրելիս (էջ 372):

Մեղքի հոգետանջ գիտակցումը հեղինակին հաճախ ցավեցնում է՝ հոգեկան տագնապ հաղորդելով նաև ընթերցողին, բայց մշտապես դրան հաջորդում է մաքրվելու հնարավորությունը. սա էլ բովանդակային ենթատեքստային հակադրման այն նրբին արվեստն է, որ բնորոշ է Նարեկացու նրբազգա գրչին:

Բազմաթիվ օրինակներից բերենք մեկը.

Մաստեա՛ տագնապոդ եւ դիւական ջերմութեան,

Որ սպրդեալ մուծաւ ընդ մեղաց

Զի փախիցե ի մարդոյս

Զարհուրեալ ի սխրալի և յանբաւելի արեան վտակի գառնիդ երկնաւորի,

Որով սրսկեալ միանգամ՝ ի մշտնջենաւորս համայն մաքրեցաք (էջ 357):

Դարձվածքը ծնվում է պատկերավոր մտածողության տիրույթում:

Հայերենի դարձվածքները նույնքան խորքային հենք ունեն, որքան խորն է հայ ժողովրդի լեզվամտածողության բնարմատը: Նարեկացին հրաշալի տիրապետում է հայ բանահյուսության կերտվածքի յուրաքանչյուր նմուշի, ավելին՝ «Նարեկը» մի անձեռակերտ խաչքար է, որի յուրաքանչյուր զարդանախշ իր անփոխարինելի տեղում է. գեղարվեստական պատկերը սկսվում է բառից, դառնում բառակապակցություն և նախադասություն ու ծավալվելով իր մեջ ներքաշում է մարդուն, որը չունի ազգային սահմանափակում, քանի որ նա «է պատգամաւոր համայն մարդկութեան»: Դարձվածքների գերակշիռ մասը հեղինակային է: Դրանք պատկերաստեղծ մեծ ուժ ունեն, ուստի երկբաղադրիչ միավոր լինելով՝ կարող են ծավալվել՝ դառնալով գլուխներ: Ի խոնարհումն Նարեկացու աստվածատուր արարման օժտվածության հիշենք Ա. Ղազինյանի դիտարկումը. «Գեղարուեստական այդ պատկերները՝ լինի բառ-պատկեր, ծաւալուն համեմատութիւն, բնանկար, հոգեվիճակ, թէ պատկեր-մենախօսութիւն, բոլորն էլ ներկայացնում են «Մատեանի» գեղագիտօրէն կազմակերպուած ոճակառուցվածքային տարրեր: Մա էլ բնութագրում է «Մատեանի» պատկերային հէնքի և նրա կառուցուածքի առանձնայատկութիւնը»<sup>4</sup>:

Նարեկացին ուներ մի մեծ առաքելություն՝ ուղղված մարդուն. **հավատն** է մարդու փրկության և լինելիության ուժը: Լավագույնս տիրապետելով Աստվածաշնչի յուրաքանչյուր տողին՝ հեղինակը քրիստոնեական վարդապետության հավատամքը ներարկում է մարդու մեջ՝ բանաձևելով ամենակարևորը՝ Աստված սեր է և սիրո ուժով մարդուն կփրկի մեղքերի վիհից: Հեղինակի խոհերի տիրույթը լի է տագնապով, հույզերով և հավատով:

Բառարվեստի և բառաստեղծման մեծագույն վարպետը արարել է բազմաթիվ դարձվածքներ և դարձվածային արտահայտություններ, որոնք բնորոշվում են կենսական մեծ ուժով, ընդհանրացման հենքով և ոճագործառական ինքնատիպ նկարագրով:

Այսպիսով, թեպետ նարեկագիտությունը ըստ արժանվույն գնահատել է «Մատեան ողբերգութեան» պոեմը՝ լեզվաոճական հատկանիշների ամբողջական ընդգրկմամբ, այնուամենայնիվ պոեմում կիրառված դարձվածային միավորները և արտահայտությունները առանձին ուսումնասիրության կարիք ունեն, որի սկիզբ կարող է լինել սույն հոդվածը: Պոեմում գործածված դարձվածային արտահայտությունների ոճական առանձին ներուժը պայմանավորված է հեղինակի լեզվամտածողությամբ: Հին հայերենի լեզվաոճական հատկանիշների գիտական արժևորումը պոեմում հիմք է դառնում գրաբարի դարձվածային ոճաբանության քննության:

<sup>4</sup> Ա. Ղազինեան, նշվ. աշխ., էջ 198:

**Բանալի բառեր** – դարձվածային արտահայտություն, շրջառույթ, համըմբռնում, հակադրում, փոխաբերույթ, հեղինակային դարձվածային միավորներ, կրկնություն, բացթողում, աստիճանավորում

**АННА АБАДЖЯН – Стилистическая значимость фразеологизмов и фразеологических оборотов в «Книге скорби» Григора Нарекаци.** – Исследователи творчества Григора Нарекаци по достоинству оценили «Книгу скорби» со всеми её языковыми и стилистическими особенностями, однако фразеологические единицы и обороты, использованные в ней, нуждаются в отдельном изучении. К такому относится и данная работа. Стилистический потенциал фразеологизмов и фразеологических оборотов произведения обусловлен образным языковым мышлением автора. Научно обоснованная стилистическая оценка языковых и стилистических особенностей древнеармянского языка на основе текста «Книги скорби» становится предпосылкой для дальнейшего анализа фразеологической стилистики грабара.

**Ключевые слова:** *фразеологическое выражение, инверсия, синекдоха, антитеза, метафора, авторские фразеологические единицы, повторения, пропуски, градация*

**ANNA ABAJYAN - Stylistic Significance of Phraseological Units and Phraseological Expressions in G. Narekatsi's Poem "The Book of Lamentations".** – Researchers of G. Narekatsi's creativity appreciated the poem "The Book of Lamentations" with all its linguistic and stylistic features. However, the phraseological units and expressions used in the poem need a thorough examination, and the present article is a study of this kind. The stylistic potential of the phraseological units and phraseological expressions of the poem is due to the figurative linguistic thinking of the author. A scientifically grounded stylistic assessment of the linguistic and stylistic features of the Ancient Armenian language, based on the text of the poem, becomes a prerequisite for further analysis of the phraseological stylistics of Grabar.

**Key words:** *phraseological expression, inversion, synecdoche, antithesis, metaphor, author's phraseological units, repetitions, omissions, gradation*

Ներկայացվել է՝ 20.10.2020, Գրախոսվել է՝ 27.11.2020, Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020